ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 19/13-60183

«31» 10 2013թ.

<<Ինֆորմացիայի Ազատության
Կենտրոն>> ՀԿ-ի իրավաբան
պարոն Գևորգ Հայրապետյանին

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի պատասխան Երևանի քաղաքապետին հասցեագրված Ձեր 18.10.2013թ. հ.210-ի8 գրության տեղեկացնում եմ, որ Բաբաջանյան փողոց հ.10/4 հասցեում գտնվող 245քմ մակերեսով հողամասը օտարվել է աճուրդային եղանակով և Երևանի քաղաքապետի 06.08.2007թ. հ.2701-Ա որոշմամբ աճուրդի հաղթող է ճանաչվել քաղաքացի Սամվել Պետրոսյանը, իսկ նշված որոշմամբ ծագող իրավունքները ստացել են պետական գրանցում և հիշյալ հասցեի հողամասն ամրագրված է նույն հասցեի անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման համար 17.08.2007թ. տրված հ.2259798 վկայականում:

Տեղեկացնում եմ նաև, որ 06.08.2007թ. Երևանի քաղաքապետի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա հիշյալ հողամասի մի հատվածում հասարակական նշանակության օբյեկտի կառուցման համար կառուցապատողի կողմից մշակվել և Երևանի քաղաքապետարանի հետ 24.10.2008թ. համաձայնեցվել է հ.02/18-05/1-Պ-1693-975 նախագիծն ու կառուցապատող՝ Սամվել Պետրոսյանին 24.10.2008թ. տրվել է հ.05/1-Պ-1693-806 շինարարության թույլտվությունը, համաձայն որի նախատեսված է եղել կառուցել մեկ նկուղային և երկու վերգետնյա հարկերով հասարակական նշանակության շինություն:

Վերոնշյալ հողամասի չկառուցապատված հատվածում՝ նույնպես կառուցապատում իրականացնելու նպատակով, Ս.Պետրոսյանի կողմից սահմանված

կարգով ներկայացված հայտի հիման վրա Երևանի քաղաքապետի կողմից տրվել է 29.04.2013թ. հ.01/18-07/1-Պ-739-343 ճարտարապետահատակագծային առաջադրանքը, որով հնարավորություն է ընձեռնվել՝ առանց հողամասի ընդլայնման, ընդլայնել նախկինում կառուցված շինությունը և կառուցապատողի կողմից մշակվել ու Երևանի քաղաքապետարանի հետ 02.09.2013թ. համաձայնեցվել է մեկ հարկանի շինություն կառուցելու հ.01/18-05/1-Պ-1838-812 նախագիծը և 02.09.2013թ. տրվել է հ.01/18-Պ-1838-859 շինարարության թույլտվությունը:

Տեղեկացնում եմ նաև, որ վերը նշված նախագծերը սահմանված ընթացակարգով ենթարկվել են համապատասխան փորձաքննությունների, որոնց հիման վրա տրվել են մասնագիտական դրական եզրակացություններ և վերոնշյալ հասցեում ներկայումս փաստացի իրականացվում է հիշյալ կցակառույցի կառուցման շինարարական աշխատանքներն, իսկ այդ հատվածում ծառահատում իրականացնելու վերաբերյալ փաստեր Երևանի քաղաքապետարանի կողմից չեն հայտնաբերվել:

Կից ներկայացնում եմ Ձեր վերոնշյալ գրությամբ պահանջվող և վերը շարադրված պատասխան գրությունում նշված քաղաքաշինական փաստաթղթերի պատճենները:

Առդիր 14 թերթ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Հ.ԱՍԱՏՐՅԱՆ**

Կատարող՝ Ա. Գրիգորյան
հեռ. 060 460 560